ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 010-594015

N^e^_____

«____» _____ 20 թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(foi@foi.am)

Հարգելի՛ տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր՝ 2019 թվականի հունվարի 18-ի դիմումի՝ հայտնում ենք, որ Արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ցմահ դատապարտյալ Միեր Ենոքյանի կողմից ներկայացվել է ներման խնդրագիր, որին օրենքով սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք:

Հաշվի առնելով ներման հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունը՝ 2018 թվականի հունիսի 15-ի «Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի N 782-Ն որոշմամբ սահմանվել է, որ Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի օրակարգում ընդգրկված հարցերը և արտահայտված դիրքորոշումները ենթակա չեն հրապարակման:

Ելնելով վերոգրյալից՝ Արդարադատության նախարարությունը իրավասու չէ այլ անձանց տրամադրել Հանձնաժողովի գործունեության հետ կապված որևէ տեղեկատվություն, ինչպես նաև Հանձնաժողովի եզրակացության պատճենը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Քնարիկ Մկրտչյան
ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն և քրեակատարողական
քաղաքականության մշակման վարչություն
Հեռ.՝ 59-40-25